ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆԻ մայիսի քսանչորսին

Ք. ԱՐՄԱՎԻՐ «14» 05 2014Թ.

Արմավիրի քաղաքային համայնքը՝ ի դեմս քաղաքապետ Ռուբեն Խաչիկի Խլղաթյանի, հետագայում «Վարձատու», մի կողմից և «Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ գտնվող ք. Երևան-0010 Կառավարության տուն 3 հասցեում, ի դեմս աշխատակազմի ղեկավար Սուրեն Քրմոյանի, լիազորագրով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության Արմավիրի տարածքային կենտրոնի պետ՝ Մելանյա Տոնոյանը հետագայում «Վարձակալ», մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 441 հոդվածի 2-րդ կետով, 653-659 հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 և 37 հոդվածներով և հիմք ընդունելով Արմավիրի քաղհամայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 25-ի թիվ 41-Ա, Արմավիրի քաղաքապետի 2014 թվականի ապրիլի 30-ի թիվ 279-Ա որոշումները, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայն սույն պայմանագրի Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Արմավիր քաղաքի Ջիվանու 40 հասցեում գտնվող «Արմավիրի քաղաքային համայնքի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վարչական շենքից տարածք (Այսուհետ Գույք):

1.2. Վարձակալության հանձնվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 110.0 (մեկ հարյուր տաս) քմ:

1.3. Սույն պայմանագիրը կնքվում է 4 (չորս) տարի ժամկետով:

1.4. Գույքն սեփականության իրավունքով պատկանում է Արմավիրի քաղ. համայնքին՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից 08.11.2011թ. տրված թիվ 2849215 սեփականության իրավունքի վկայականի հիման վրա:

1.5. Սույն պայմանագիրը կնքելու պահին նշված տարածքը վաճառված, գրավ դրված չէ, կալանքի և արգելանքի տակ չի գտնվում (հիմք կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից 13.05.2014թ. տրված N ՍՏ-13052014-04-0005 տեղեկանքը):

1.6. Սույն պայմանագիրն ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն պարտավորվում է՝

2.1.1. Վարձատուի կողմից վարձավճարների սակագների փոփոխման դեպքում մեկ շաբաթյա ժամկետում տեղյալ պահել վարձակալին.

2.1.2. Տարածքը փոխանցել վարձակալին ոչ ուշ քան 10-օրյա ժամկետում: Նշված պարտավորությունը կհամարվի կատարված կողմերի կողմից վարձակալի տիրապետման և օգտագործման համար շենքը հանձնելու վերաբերյալ ակտը ստորագրելու պահից:

2.2. Վարձատուն իրավունք ունի՝

2.2.1. պահանջել Վարձակալից ժամանակին վճարել վարձավճարը.

2.2.2. թույլատրել Վարձակալին սահմանված կարգով վարձակալված տարածքում կատարել հիմնական վերանորոգման և շինարարական աշխատանքներ.

2.2.3. պահանջել Վարձակալից վարձակալված տարածքն օգտագործել իր նպատակային նշանակությանը համապատասխան.

2.2.4. սույն պայմանագրի պայմանները Վարձակալի կողմից խախտելու դեպքում սահմանված կարգով վաղաժամկետ լուծել պայմանագիրը:

2.3. Վարձակալը պարտավորվում է՝

2.3.1. ժամանակին վճարել վարձակալական վճարը.

2.3.2. շենքը պահպանել պատշաճ վիճակում.

2.3.3. իր հաշվին իրականացնել շենքի ընթացիկ վերանորոգում և կրել շենքի պահպանման ծախսերը.

2.3.4. հատկացված շենքի և նրա առանձնացված մակերեսների, բացվածքների, հողատարածքների վարձավճարը մուծել Վարձատուին կամ նրա լիազորված անձին մինչև յուրաքանչյուր ամսվա 30-ը՝ամսեկան պարբերականությամբ՝ պայմանագրի 4.1 կետում նշված 1 քմ-ի համար համայնքի քաղ. ավագանու կողմից սահմանված վարձավճարը.

2.3.5. վարձավճարը պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է տույժ, յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար չվճարված գումարի 0.05%-ի չափով.

2.3.6. առանց Վարձատուի համաձայնության վարձակալված շենքը չհանձնել ենթավարձակալության և չկատարել շենքի կամ բացվածքի կառուցվածքային փոփոխություն:

2.3.7. սույն պայմանագրի լուծման դեպքում շենքը Վարձատուին վերադարձնել նույնպիսի վիճակում, որում այն ստացվել էր՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը: Հանձնումը կատարել փոխանցման ակտով:

3. ՇԵՆՔԻ ԲԱԺԱՆԵԼԻ ԵՎ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ

3.1. Վարձակալի կողմից կատարված բաժանելի բարելավումները հանդիսանում են նրա սեփականությունը:

3.2. Սույն պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կողմերը կրում են ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

4. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ

4.1. Տարածքի վարձավճարը 1 քմ համար տարեկան կազմում է 2000 (երկու հազար) ՀՀ դրամ, ամսական մակերեսի վարձավճարը՝18333 (տասնութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ, իսկ տարեկան վարձավճարը՝ 220000 (երկու հարյուր քսան հազար ՀՀ դրամ:

4.2. Վարձավճարի փոփոխման դեպքում վարձատուն պարտավոր է այդ մասին նախօրոք տեղյակ պահել վարձակալին:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԸ

5.1. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, հրդեհ, երկրաշարժ, այլ տարերային աղետներ, պատերազմ ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մայրուղային խողովակաշարերի վթար կամ նման այլ իրադարձություններ:

5.2. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել, և որի պատճառով վարձակալը չի կարող շարունակել հողի բնականոն օգտագործումը:

5.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավել երկարաձգվելու կամ դրա հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացնելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Իր պարտավորությունները պատշաճ կերպով կատարող Վարձակալը սույն պայմանագրի ժամկետի լրանալուց հետո այլ հավասար պայմանների դեպքում ունի նոր ժամկետով պայմանագրի կնքելու գերադասելի իրավունք: Վարձակալը պարտավոր է գրավոր ձևով
ծանուցել Վարձատուին պայմանագրի ժամկետն երկարացնելու մասին ոչ ուշ քան պայմանագրի ժամկետը լրանալուց 1 ամիս առաջ:

6.2. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից, կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) էջից, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժը, որոնցից առաջին օրինակը պահվում է նոտարական գրասենյակում, երկրորդ օրինակը պետք է ներկայացվի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանումում գրանցման 30-օրյա ժամկետում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՎԱՐՁԱՏՈՒ	ՎԱՐՁԱԿԱԼ
ՀՀ ԱՐԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԱՐՄԱՎԻՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 32 ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հ/Հ 900335201258	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ Ք. ԵՐԵՎԱՆ-0010 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՔՐՄՈՅԱՆ հեռ. 2-16-74, 093-32-30-62
ՀՎՀՀ 04401882 ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ ______ (ստորագրություն) Լիազորված անձ՝ ______ (ստորագրություն)	Լիազորված անձ՝ ______ (ստորագրություն) ______ (ստորագրություն)

Կ.Տ.

«14» « » 2014թ. սույն պայմանագիրը վավերացվել է իմ, Արմավիրի նոտարական տարածքի նոտար ______ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցիչի լիազորությունները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածին համապատասխան սույն պայմանագիրը ենթակա է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանումում գրանցման, 30 օրյա ժամկետում:

Գրանցված է ռեգ. նո. ----------3012----------

Գանձված է պետ. տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

ՆՈՏԱՐ

809393

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «19» Մայիսի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Արմավիր ք. Ջիվանու փողոց N 40 թիվ 2 մսուր մանկապարտեզ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 14.05.2014թ. սղմ.3072

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	**04-001-0062-0038-001**	**Մանկապարտեզ**	**110 ք.մ.**	**ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Վարազդատ Անտոնյան

զբաղեցրած պաշտոնը՝ Արմավիրի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԿ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող սպասարկման գրասենյակի

Ս.Տ.